ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 67 – Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 1803-Լ որոշմամբ հաստատված՝ «Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունից բխող գործողությունների 2024-2026 թվականների ծրագրի» 3-րդ ուղղության («Կրթական միջավայրի բարելավում, ոստիկանության կադրային պատրաստում, մասնագիտական զարգացում») 5-րդ գործողության.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների տարեկան վերապատրաստումների պլանի մշակման մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ռեկտորին՝ ապահովել սույն հրամանով հաստատված մեթոդաբանության ներդրումն ու կիրառումը վերապատրաստման գործընթացում:
3. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետին:
4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

25.09.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի

25.09.2025 թ. թիվ 67 – Լ հրամանի

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՆԵՐԸ

1. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կողմից իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի բաղկացուցիչ մաս են կազմում վերապատրաստման (որակավորման բարձրացման) դասընթացը: Նշված դասընթացի արդյունավետության առաջին նախադրյալը կազմակերպման (կառավարման) օպտիմալ համակարգի ստեղծումն է:

2. Վերապատրաստումը նպատակ ունի ոչ միայն արդիականացնել ոստիկանության ծառայողների գիտելիքները (ունակությունները), համահունչ դարձնել դրանք ժամանակի նոր պահանջներին կամ տեխնոլոգիաներին, այլ նաև զարգացնել (ամրապնդել) ծառայողական առաջադրանքների կատարման ժամանակ խոչընդոտներ հաղթահարելու, սթրեսային (այդ թվում՝ արտակարգ) իրավիճակներում գործելու և օպտիմալ ու ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակությունները (հմտությունները)՝ երաշխավորելով տարեկան կտրվածքով շարունակական մասնագիտական զարգացում:

3. Այդ նպատակի իրագործման նկատառումներից ելնելով՝ ոստիկանության ծառայողների վերապատրաստման առջև դրվում են մի շարք խնդիրներ՝

1) ոստիկանության ծառայողի արժեքաբանական կողմնորոշումների ձևավորումը.

2) որակավորված կադրերի ձևավորումը.

3) վերապատրաստման օպտիմալ մեթոդների և ձևերի որոշումը.

4) վերապատրաստման համակարգի նյութատեխնիկական և ծրագրային-մեթոդական ապահովման բարելավումը:

4. Վերը նշված խնդիրների լուծումն իր հերթին նախադրյալներ է ստեղծում մարդկային ռեսուրսի կառավարման համակարգի մի շարք գործառույթների իրացման համար՝

1) կադրային ընթացիկ և հեռանկարային պահանջմունքի կանխատեսումը.

2) ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատումը.

3) կադրերի առաջխաղացման, մասնագիտական աճի և վերաբաշխման գործընթացի պլանավորումը և այլն):

5. Վերը նշված ելակետային դրույթների իրացման անհրաժեշտ նախադրյալներն են՝ դասախոսի և բուհի ակադեմիական ազատությունը, որոշումների կայացման օպտիմալ վարչարարությունը (օպտիմալ որոշումների կայացման մեթոդաբանությունը), դասավանդման գործընթացում ընդգրկված աշխատակիցների (պրոֆեսորադասախոսական կազմի) նյութական և բարոյական խրախուսումը: Առանց այս նախադրյալների վերապատրաստման կառավարման համակարգի օգտակար գործողության գործակիցը շատ ցածր կլինի:

II. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐՐԵՐԸ

6. Կարիքների գնահատումը: Այս տարրը ենթադրում է՝

1) տվյալների հավաքագրում, այդ թվում՝ վիճակագրության վերլուծություն, որն իրականացվում է շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների (աշխատակիցների) շրջանում հարցումների անցկացման միջոցով.

2) վերապատրաստման դասընթացի առաջնահերթությունների որոշում, որն ենթադրում է համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ իրենց ենթակա աշխատակիցների մոտ մասնագիտական առավել կրիտիկական բացերի վերհանում (այդ թվում՝ ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման միջոցով), որոնց վերապատրաստման ժամանակ անհրաժեշտ է տալ առաջնահերթ նշանակություն.

3) վերապատրաստման դասընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ ժամանակային, մանկավարժական, լսարանային-տեխնիկական

ռեսուրսների գնահատում.

4) վերապատրաստման դասընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար արտաքին ռեսուրսների (այդ թվում՝ դասավանդման պրոցեսում այլ բուհերի դասախոսների, ոստիկանության պրակտիկ ծառայողների, միջազգային կամ հասարակական պրոֆիլային կազմակերպությունների ներկայացուցիչների) ներգրավման անհրաժեշտության պարզում.

5) ուսումնական խմբերի կոմպլեկտավորում: Կարիքների գնահատման այս կոմպոնենտն իրականացնելիս, բացի ընդհանուր ստանդարտներից (օր.՝ ուսումնական խմբում սովորողների քանակի պահանջը և այլն) անհրաժեշտ է ձևավորել հնարավորինս միատարր կազմ ունեցող ուսումնական խմբեր՝ խուսափելով մասնագիտական պատրաստականության տարբեր մակարդակ ունեցող մասնակիցներ կամ պրոֆիլային տարբեր ծառայությունների ներկայացուցիչներ ունեցող խմբերից (օր.՝ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող և այդպիսին չունեցող, ղեկավար կազմի և կրտսեր կամ միջին օղակի ծառայողներ և այլն):

6.1. Ելնելով ծառայողական գործառույթների պատշաճ և անխոչընդոտ իրականացման նկատառումներից՝ վերապատրաստման դասընթացի ուսումնական խմբերում ծառայողների ընդգրկման ժամանակի ընտրությունը կատարվում է հենց ծառայողի (նրա ստորաբաժանման ղեկավարի) կողմից, ինչը ճկունություն կհաղորդի այդ գործընթացին, թույլ կտա խուսափել տեղերում ոստիկանության ուժերի պակասի առաջացումից:

6.2. Ղեկավար օղակների ծառայողներից բաղկացած խմբերի վերապատրաստման դասընթացի ծրագիրը պետք է ներառի առաջնորդության և կառավարման տարր՝ ոստիկանության ստորաբաժանման ներսում արդյունավետ ղեկավարման ավանդույթներ ձևավորելու և պահպանելու, ղեկավար կազմին մենթորության, քոուչինգի և կառուցողական հետադարձ կապի գործիքակազմով զինելու նպատակով, ինչը նաև կնպաստի նրանց ենթակայության տակ գտնվող աշխատակիցների մասնագիտական աճին:

7. Դասընթացի ծրագրի մշակումը և իրականացումը: Այս տարրը ներառում է՝

7.1. Ծրագրային բաղադրիչների որոշումը: Ծրագիրը որպես կանոն ունենում է երկու

բաղադրիչ (մոդուլ)՝ հիմնական (ընդհանուր-իրավական) և խորացված (հատուկ մասնագիտական)՝ ըստ ոստիկանական գործունեության ոլորտի (ծառայության տեսակի): Վերապատրաստման դասընթացի ծրագրային խորացված մոդուլները, նեղ մասնագիտական գիտելիքներից և հմտություններից բացի (քրեադատավարական, օպերատիվ-հետախուզական, վարչաիրավական և այլն, կամ առաջնորդության և կառավարման հմտություններ՝ ղեկավար Լազմի համար), ըստ անհրաժեշտության, կարող են ներառել նաև հաղորդակցման և սթրեսի կառավարման ունակություններ, թվային աշխատանքի ունակություններ (տեղեկատվական-վերլուծական համակարգեր, սոցիալական ցանցեր):

7.2. Դասավանդման մեթոդների և ձևերի որոշումը, անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերումը: Այս կոմպոնենտը ենթադրում է՝

1) ակտիվ և ինտերակտիվ մեթոդների ընտրությունը.

2) դասախոսությունների, սեմինարներ-քննարկումների, գործնական պարապմունքների (թեստավորում, իրավիճակային խնդիրների լուծում, գործնական խաղեր և այլն) համամասնության որոշումը.

3) VR սիմուլյացիաների և իրավիճակային սիմուլյատորների (օր.՝ ընտանեկան բռնության, վկաների հարցաքննություն, քաղաքացիների հետ հաղորդակցման, և այլ իրադրությունների մոդելավորում) ընտրությունը.

4) լսարանների և ուսումնական այլ տարածությունների տեխնիկական հագեցվածության ապահովումը:

8. Ծրագրի իրականացման նկատմամբ ընթացիկ հսկողության սահմանում, որը չպետք է կաշկանդի ակադեմիական ազատությունը և միաժամանակ թույլ տա իրականացնել դասավանդման որակի մոնիթորինգ:

9. Դասընթացի ծրագրի կատարման արդյունավետության գնահատում: Դասընթացի կազմակերպման այս տարրն իրացվում է հետևյալ գործիքների միջոցով՝

1) նախնական և հետագա թեստավորումը.

2) հսկիչ առաջադրանքների կատարումը.

3) գիտելիքների միջանկյալ և եզրափակիչ ստուգումը.

4) սովորողների կարգապահական ցուցանիշների, դասընթացի վերաբերյալ նրանց

արձագանքների վերլուծություն՝ կրթության որակի ապահովման գործիքակազմով:

10. Դասընթացի ծրագրի շարունակական զարգացումը (ծրագրային ադապտացիան): Վերապատրաստման կազմակերպման համակարգի այս տարրը դասընթացի տրամաբանական շարունակությունն է: Այն, մասնավորապես, ենթադրում է ծրագրերի բովանդակային լրամշակումներ՝ ելնելով տեսության, օրենսդրության և տեխնոլոգիաների զարգացումից, դասընթացի ընթացքում վեր հանված թերությունների շտկման անհրաժեշտությունից: Սա իհարկե չպետք է իրականացվի պարտադիրության սկզբունքով, այլ ըստ անհրաժեշտության:

II. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

11. Վերապատրաստման կուրսերում դասավանդման մեթոդիկայի ընտրության տեսանկյունից որոշիչ նշանակություն ունեցող օբյեկտիվ գործոնը կրթահամալիր գործուղվող խմբերի ուսման տևողության սեղմ լինելն է: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ակնհայտ է դառնում, որ տվյալ դեպքում դասավանդման ավանդական մեթոդները (տեղեկատվական կամ ավանդական դասախոսությունը, թեմայի կամ դրա մի մասի պարզ վերարտադրման վրա կառուցվող սեմինար պարապմունքը) ոչ էֆեկտիվ են: Այս դեպքում առավել կիրառելի է պրոբլեմային ուսուցումը, որն առաջնային պլան է մղում ուսանողների մոտ գործնական հմտությունների և կարողությունների ձևավորումը:

12. Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան իրենից ներկայացնում է բարդ գործընթաց, որի հիմքում ընկած է սովորողների առջև ուսումնաճանաչողական խնդիրների, իրավիճակների և կանխամտածված հակասությունների ձևակերպումը: Այդ հակասական իրավիճակները և խնդիրները պայմանավորված են հետազոտվող թեմայի (առարկայի, մոդուլի) բնույթով ու կառուցվում են՝ հաշվի առնելով լսարանի ինտելեկտուալ մակարդակը և նրանց մասնագիտական գործառույթների բնույթը:

13. Պրոբլեմային ուսուցումը ենթադրում է կոնկրետ մեթոդների կիրառում, որոնք պետք է հիմնվեն պրոբլեմայնության որոշակի մակարդակների վրա:

1) Պրոբլեմային շարադրման մեթոդը: Սա սովորողի ճանաչողական գործունեության ակտիվացման մեթոդական հնարք է, որի էությունը կայանում է

պարապմունքի ժամանակ երկու-երեք ոչ բարդ պրոբլեմային իրավիճակների ներկայացման և դասախոսի կողմից դրանց լուծման մեջ: Ընդ որում՝ դասախոսն այստեղ ոչ միայն ցուցադրում է պրոբլեմային իրավիճակի վերջնական լուծումը, այլև բացահայտում է դեպի տվյալ լուծումը տանող ուղին, դրա տրամաբանությունը, ցուցադրում հակասությունների ակունքները՝ փաստարկելով իր հետևությունների յուրաքանչյուր քայլը: Այս մեթոդը սովորողների մոտ ձևավորում է պրոբլեմը տեսնելու ունակություն և նպաստում է քննադատական ու ալլընտրանքային մտածողության զարգացմանը և այլ մեթոդների հետ համադրության մեջ կարող է ձևավորել պրակտիկ խնդրի ինքնուրույն իմաստավորման ունակություն և ստեղծագործ մտածողություն:

2) Որոնողական (էվրիստիկ) մեթոդը, որի էությունը կայանում է առանձին տեսագործնական հարցերը պրոբլեմային դիրքերից ներկայացնելու, սովորողներին երկխոսության մեջ ընդգրկելու և դասախոսի օգնությամբ պրոբլեմային իրավիճակը լուծելու մեջ:

3) Հետազոտական կամ փորձարարական մեթոդ. այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս պրոբլեմային մոտեցման ձևով անցկացնել պարապմունք, որում պրոբլեմային իրավիճակների լուծումը տեղի է ունենում սովորողների ուժերով՝ ինքնուրույն: Պարապմունքի ժամանակ դասախոսը մեկը մյուսի հետևից առաջադրում է տեսագործնական հիմնախնդիրներ, դրանցից յուրաքանչյուրով ձևակերպում պրոբլեմային իրավիճակներ, իսկ սովորողները ինքնուրույն վերլուծում են դրանք և առաջարկում լուծման տարբերակներ, որոշում լուծման առավել օպտիմալ ուղին՝ օգտագործելով իրենց ունեցած գիտելիքները: Այդ ընթացքում դասախոսը դիտարկում է ուսանողների կարողությունները և հմտությունները՝ միաժամանակ պարզելով գիտելիքների այն շրջանակը, որը բացակայում է սովորողների մոտ և խոչընդոտում պրոբլեմի լուծմանը: Այստեղ դասախոսի դերը սովորողների ուղղորդումն է, ստեղծագործական որոնման գործընթացին աջակցելը:

14. Լսարանի մասնագիտական բարձր պատրաստվածության պարագայում դասախոսը կարող է հանձնարարել սովորողներին, որպեսզի իրենք ձևակերպեն պրոբլեմային իրավիճակներն ու որոնեն դրանց լուծման ուղիները: Այս մեթոդն իր

մեջ արտացոլում է պրոբլեմային ուսուցման վերին մակարդակը, որը, որպես կանոն, կիրառվում է երկար տարիներ պրակտիկ փորձ ունեցող կամ ղեկավար կազմի ծառայողներից բաղկացած խմբերում:

15. Վերապատրաստման կուրսերում պրոբլեմային ուսուցման ուսումնամեթոդական ապահովումը, հնարավորության դեպքում, իրականացվում է մոդուլային սկզբունքով պատրաստված ծրագրերի հիման վրա՝ նպատակ ունենալով կարճ ժամանակահատվածում սովորողների մոտ ձևավորել նոր հմտություններ և կարողություններ:

16. Կառուցվածքային տեսանկյունից մոդուլային ուսուցման ծրագիրը բաժանվում է մասնիկների, որոնցից յուրաքանչյուրն իրենից պետք է ներկայացնի ուսումնական նյութի տրամաբանորեն ավարտուն մաս: Այն պետք է ունենա մասնակի նպատակ և խնդիր, իսկ ամբողջ մոդուլը՝ ապահովի սովորողին գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցում:

17. Մոդուլի մասնիկների և դրանց ժամանակային հարաբերակցության կառուցումը տեղի է ունենում միջամբիոնային քննարկումների արդյունքում՝ ելնելով ոստիկանության կոնկրետ ծառայության առջև դրված մասնագիտական խնդիրների բնույթից և վերապատրաստման ժամանակահատվածից:

18. Վերապատրաստման կուրսերում վերը նշված մեթոդների կիրառումն առավել էֆեկտիվ կլինի ապագա մասնագիտական գործունեության իրավիճակներ վերարտադրող պայմաններում և միջավայրում (ուսումնական պոլիգոններ, սիմուլյացիոն լսարաններ, ուսումնական տրենաժորներ, և այլն):